ՈՒՇԱԾԱԾ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐ

Ֆադեյ Սարգսյանի հրաժարականից մեկ ամիս ու կես անց՝ մայիսի 17-ին, Գիտությունների ազգային ակադեմիայի 79 իսկական եւ թղթակից անդամների ՄԻ ՄԱՍԸ ընտրեց ակադեմիայի չորրորդ պրեզիդենտին՝ ընդամենը 10 ձայնի առավելությամբ ընտրվեց Երեւանի պետական համալսարանի նախկին ռեկտոր, 70-ամյա Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ:



Ցավոք, գիտության հիմնահարցերի, հայաստանյան գիտության մեջ տիրող ծգնաժամը հաղթահարելու ուղիների մասին վերլուծությունների փոխարեն զանգվածային լրատվամիջոցները սահմանափակվեցին հարցի անձնավորմամբ՝ եթե **կենսաթոշակային տարիքի** պատճառով Ռադիկ Մարտիրոսյանն ազատվեց համալսարանի ռեկտորի պաշտոնից, ինչո՞ւ նույն իրավական նորմը չգործեց ակադեմիայում, ինչո՞ւ Ռադիկ Մարտիրոսյանը պետք է զբաղեցնի **չորս աթոռ՝** ակադեմիայի ղեկավարի, ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ակադեմիական ինստիտուտի (քաղաք Աշտարակ) ղեկավարի, համալսարանի ամբիոնի վարիչի, ինչ-որ գրանտային ծրագրի ղեկավարի, ինչո՞ւ նա չի արծագանքել բոլոր լրատվամիջոցներում հրապարակած սոցիոլոգիական հարցման արդյունքներին՝ իր ղեկավարած համալսարանը, մրցանակային տեղ է գրավել **կոռուպցիոն ռիսկերի վերին սանդղակում** կամ, եթե հարազատ կոլեկտիվը՝ համալսարանը այլեւս նրան չվստահեց եւ նույնիսկ խորհրդի նախագահ չընտրեց, ինչո՞ւ ողջ հայաստանյան գիտությունը կարող ենք վստահել նրան: Նշվեցին-վերհիշվեցին նաեւ այլ փաստեր: Դարձյալ ուշացումով՝ post factum, երբ արդեն արձանագրվել էր ակադեմիայի նախագահի (եւ ոչ պրեզիդենտի) ընտրությունը: Եթե նախքան քվեարկությունը թեկուզ այս փաստերն ամբողջական ներկայացվեին, դժվար թե այդքան ձայն հավաքվեր: Օրինակ, նշվեց. **«Ռադիկ Մարտիրոսյանը մեծ հեղինակություն չէր վայելում իր ղեկավարած համալսարանում, 1995-ին իշխանությունները՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, ամեն կերպ նպաստում էին, որ Ռադիկ Մարտիրոսյանը պատգամավոր դառնա, բայց իր հարազատ միջավայրում՝ Այգեստանում, որտեղ հիմնականում բնակվում են համալսարանականները, ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը խայտառակ պարտություն կրեց իր ենթակայից՝ նույն համալսարանի շարքային դասախոս Արշակ Սադոյանից»:** Նշվածը դառն իրականություն է, գրանցված փաստեր են: Փաստենք նաեւ՝ նշված (եւ **բազմաթիվ** չնշված) հարցադրումները երկարատեւ եւ տառապալից «պեղումների» շնորհիվ չէ, որ հայտնաբերվել են: Դրանք ամեն օր բարձրաձայնվում են պետհամալսարանի, ԳԱԱ-ի նախագահության, ակադեմիական ինստիտուտների միջանցքներում, սենյակներում... Արհամարհե՞լ հասարակական կարծիքը: Իհարկե, ոչ: Թեկուզ այն պատճառով, որ այն կունենա **բումերանգի էֆեկտ**: Եթե 70-ամյակը հաղթահարած յուրաքանչյուր ակադեմիկոս, չարաշահելով իր ներուժը 4-ական աթոռ զբաղեցնի, գիտության ծերացման իրական վտանգի մասին խոսքերը, մտքերը, մտահոգությունները կվերածվեն շարքային փուչիկի:

Ակադեմիայի միջանցքներում շա~տ բաց խոսում են՝ «Եթե Ռադիկ Մարտիրոսյանը բազո~ւմ տարիների ընթացքում չկարողացավ մեկ՝ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում իրեն փոխարինող պատրաստել եւ **ՍՑԻՊՎԱԾ** (՞) էր համատեղել՝ մի ոտքը Երեւան, Ալեք Մանուկյանի 1 (Երեւանի պետհամալսարան) եւ մյուս ոտքը՝ Աշտարակ, Ալիխանյան եղբայրների 1 (ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտ)(պաշտոնական ճողվածքի վտանգ չկա՞), կկարողանա՞ ողջ ակադեմիական համակարգը ոտքի կանգնեցնել...»:

Կամ, եթե նույն այդ ինստիտուտում Ռադիկ Մարտիրոսյանը կարողանար թեկուզ ինչ-որ նկատելի աշխատանք կատարել, բնագավառի 60-ականների գիտական օրակարգը մոտեցներ մեր ժամանակներին, նախ, ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտն այսօրվա տխուր, կիսաքայքայված վիճակում չէր լինի, երկրորդ, կարելի է ենթադրել՝ մեկ (թեկուզ՝ մեկ) ինստիտուտ ոտքի կանգնեցնողը (թեպետ շուրջ 15 տարի ինքն է ինստիտուտի տնօրենը եւ ինքն է ինստիտուտը հասցրել այդ վիճակի) կկարողանա՞ ոտքի կանգնեցնել հայաստանյան գիտությունը:

Համալսարանում խոսում են նաեւ տղային հանձնած հանրակացարանի, ռեստորանի, ինչ-որ մեռած հոգիների,... մասին: Այս եւ մյուս մանրամասներին երեւի հարկ չլինի անդրադառնալու...

Պակաս ուշագրավ չէ նաեւ հետեւյալ փաստը. Ֆադեյ Սարգսյանին են վերագրվում որոշակի մեղքեր՝ գիտության այսօրվա վիճակի համար: Եթե այդ մեղքերն իրական են, ապա այդ մեղքերի մեջ չունի՞ իր մեղքի բաժինը նույն Ռադիկ Մարտիրոսյանը, ակադեմիան ղեկավարում է **կոլեգիալ** մարմինը՝ նախագահությունը, որի անդամն էր նա. ինչո՞ւ երբեւէ նա որեւէ քայլ չի կատարել այդ մեղքերի բեռը թեթեւացնելու համար:

Առությամբ պարուրվեց նաեւ հետեւյալ, առնվազն **ՏԽՈՒՐ** փաստը. հանրահայտ է՝ ամբիոնի վարիչի պաշտոնը բուհի «իշխանական» բուրգի ստորին օղակն է: Խախտելով ավանդույթը, Ռադիկ Մարտիրոսյանը չսպասելով նոր ռեկտորի ընտրվելուն միացրեց ֆորսաժը՝ **կարճագույն** ժամկետում (ռեկորդային է բուհական կյանքում) կազմակերպեց ամբիոնի վարիչի (իմա՝ իր) ընտրությունը: Ընդ որում, այդ տեղն էլ հեռատեսորեն **մի քանի տարի** առաջ էր ԲՐՈՆՅԱ արել **իր համար:** Այդ նույն ամբիոնի վարիչի **ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ** (՞) պաշտոնակատար էր նշանակել ոչ թե տվյալ ամբիոնից (որպեսզի վերջինս որեւէ հավակնություն չունենա այդ աթոռի նկատմամբ), այլ **իր** երկրորդ հիմնարկից՝ Աշտարակում գտնվող ինստիտուտից: Ընդ որում՝ խախտելով աշխատանքային օրենսդրությունը, նրան այդ կարգավիճակում է պահել... շուրջ երկու տարի: Այս ապօրինությունը եւս «չի նկատվել»: Լավ, հասկացանք, չկա նախկին կուսկոմիտեն, չկա ժողովրդական վերահսկողություն, չկա շրջկոմքաղկոմ... Բայց անձնական պատասխանատվությո՞ւն էլ չկա հասարակական կարծիքի նկատմամբ: Ինչո՞ւ է այսքան անխղճորեն իջեցվել համալսարանի քաղաքացիական դիմադրողականությունը, համալսարանի նոր ղեկավարությունից որքա~ն ջանք կպահանջվի համալսարանի վաղեմի, մինչմարտիրոսյանական վարկանիշին հասնելու համար:

Ի դեպ, պատահակա՞ն է լրագրողական մանր-մունր վանյասունը նոր ղեկավարության այս կամ այն բարեփոխման կապակցությամբ:

Ինչպես պնդում են համալսարանում, բացի **ԱԹՈՌԻ ԲՐՈՆՑԱՑԻՑ**, Ռադիկ Մարտիրոսյանը մի քանի տասնյակ հազար դոլար է ծախսել այդ ամբիոնի վարիչի աշխատասենյակը վերանորոգելու (եվրո) եւ կահավորելու վրա: Եվս մեկ փաստ. ամբիոնի վարիչի՝ ուսումնական, գիտական ամենահամեստ պաշտոնում ընտրվելիս **նույն Ռադիկ Մարտիրոսյանը** ստացել է... շուրջ **«երկու տասնյակ դեմ»** քվե: Ընդ որում, նա չի ունեցել... մրցակից: Եվ տեղին է շատ-շատերի զարմանքը (եւ զայրույթը)՝ եթե իր շուրջ 15 տարի ղեկավարած կոլեկտիվը շուրջ 20 ձայնով դեմ է արտահայտվել Ռադիկ Մարտիրոսյանի ընդամենը ամբիոնի վարիչ լինելուն, ապա արդա՞ր է, համարձակ չէ՞, կոպիտ սխալ չէ՞ 70-ամյակը բոլորած եւ մերձակա գործընկերների վստահությանը չարժանացած, ակադեմիական ինստիտուտի ապագան մշուշապատած, մի քանի պաշտոններ զբաղեցնող Ռադիկ Մարտիրոսյանին վստահել հայաստանյան ողջ գիտության ապագան:

Կամ՝ նույն Ռադիկ Մարտիրոսյանն իրավունք ունի՞ պահանջել իր գործընկերներից՝ ազնվորեն կատարել օրենքի պահանջը՝ կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով իրենց աթոռը զիջել երիտասարդ գիտնականներին: Չէ՞ որ անմիջապես կհնչի հակադարձ ծանր մեղադրանքը՝ «Իսկ դո՞ւք..., չէ՞ որ մենք այդ պատճառով ընտրեցինք...»:

Բարեխղճության, մասնագիտական հոգացավության տարրական կանոնները լրագրողից պահանջում են՝ հարցերը բարձրաձայնել ժամանակին եւ ոչ թե «գնացքի հեռանալուց» հետո, քանզի նման բարձրաձայնելը բամբասանքի կարգավիճակ է ձեռք բերում: Ինչ վերաբերում է կենսաթոշակային տարիքին, ապա, փաստենք տխուր իրողություն. իրոք, օրենքով հստակ է սահմանված, որ պետական ոչ առեւտրային կազմակերպության ղեկավարի ծառայողական սահմանային տարիքը 65-ն է: Բայց Ռադիկ Մարտիրոսյանը հատել է նաեւ 70-ի սահմանը: Իսկ քանի՞ ակադեմիկոս ունենք **մինչեւ 65 տարեկան** հասակի: Քիչ են: Բայց կան: Իհարկե, կան նաեւ թղթակից անդամներ: Բայց թղթակից-անդամը իրավունք ունի միայն քվեարկելու եւ ոչ քվեարկվելու: Ինչո՞ւ..., Համենայն դեպս, այդպես է սահմանված կանոնադրությամբ: **Հարկ չէ՞ մտածել կանոնադրության այդ դրույթը վերանայելու մասին:**

Մամուլում հնչեց անլուրջ քննադատություն («...Քանզի ընտրությունը փակ դռների հետեւում էր» («ՀՀ»): Անլուրջ էր, քանզի կանոնադրությամբ է սահմանվել քվեարկության գաղտնիությունը:

Որպեսզի շղարշվի ապօրինությունը, թերթը ցանկացել է օրինականացնել ապօրինությունը: Կարելի էր լռել, եթե այդ շղարշումը շատ թափանցիկ, ակնհայտ սուտ չլիներ: Եվ թյուրիմացության մեջ չգցեին ընթերցողներին՝ «...ամենաերիտասարդ ակադեմիկոսը 65 տարեկան է»: Նախ, երեք թեկնածուներից մեկը՝ **Էդուարդ Ղազարյանը**, 64 տարեկան է: Երկրորդ, ակադեմիայի անդամների եւ թղթակից անդամների ցուցակն ուսումնասիրելիս (ընդամենը 5 րոպեի չարչարանք է), լրագրողը կպարզեր, որ կան նաեւ ավելի երիտասարդներ՝ Ռազմիկ Աբրահամյան (24.08.1943թ.), Սամվել Շուքուրյան (18.08.1950թ.), Գեղամ Գեւորգյան (29.04.1958թ.):

Եթե կա մեղք (խախտվել է օրենքը), ապա այն կանխելու մեխանիզմը հասանելի էր բոլորին՝ հարցը կարելի էր չհասցնել քվեարկության եւ տարեց ակադեմիկոսներին չմեղադրել օրենքի խախտման մեջ, ինչո՞ւ ընտրեցին: Նկատի ունենալով տարիքը՝ փաստաթղթերը պետք է չվերցնեին եւ քվեարկության չդրվեր նրանց թեկնածությունը:

Երեք թեկնածուների միջեւ ձայները բաշխվել են՝ Ռադիկ Մարտիրոսյան՝ 46 ձայն, Էդուարդ Ղազարյան՝ 36 ձայն, Լեւսեր Աղալովյան՝ 35 ձայն: **79-ի՞ց...** Այսինքն՝ 79 մասնակիցներն ունեցել են... 117 ձայն: Պարզվում է, որ այս ծլարձակումը նույնպես օրինական է, քվեարկողները կարող են իրենց ձայնը... եռապատկել՝ երեքին էլ կողմ քվեարկել: Եղա՞վ..., արդարացի՞ են, օգտակա՞ր են նման **օրինականացված** անվճռականությունը, անսկզբունքայնությունը...

Մեկ հարց եւս՝ ինչո՞ւ **պրեզիդենտ** եւ ոչ թե՝ **նախագահ**: Փաստարկներ կգտնվեն՝ ավանդույթ է: Նախ, ո՞րն է ավանդույթը՝ 63 տարվա պատմությո՞ւնը: Բայց այն ժամանակ **պրեզիդենտ** էին կոչում նաեւ երկրի առաջին դեմքին: Ավելին՝ ՍՊԸ-ների եւ կոոպերատիվների, սպորտային ֆեդերացիաների նախագահներին... Բայց հետագայում օրենսդրորեն հրաժարվեցինք **պրեզիդենտից**: Իսկ ակադեմիան պահպանի՞ **օտար բառը**՝ խախտելով օրենքը:

Եվս մեկ սկզբունքային հարց. օրինակա՞ն է, բարոյակա՞ն է, արդարացի՞ է 70-ն անց մարդուն զբաղեցնել **չորս** խիստ ծանրաբեռնված պաշտոններ, որոնցից երկուսի համար 24- ժամն էլ չի բավականացնի: Այսինքն, գիտահետազոտական ինստիտուտում (եւ այն էլ՝ այլ քաղաքում գտնվող) կամ աշխատանք չկա (ուրեմն՝ ինստիտուտը պետք է փակել), կամ էլ կա, բայց ինստիտուտի տնօրենի (Ռադիկ Մարտիրոսյանի) փոխարեն աշխատում է տեղակալը: Այս հարցում կա նաեւ մեկ, ամենեւին էլ ոչ հռետորական հարց. ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը գտնվում է ԳԱԱ-ի ենթակայության տակ: ԳԱԱ-ի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը իրավունք ունի՞, համարձակություն կունենա՞ մերժել այդ ինստիտուտի տնօրենի որեւէ առաջարկ: Կամ կկարողանա՞ այնտեղ որեւէ ստուգում կատարել: Չէ՞ որ այդ ինստիտուտի տնօրենն նույն ինքը... Ռադիկ Մարտիրոսյանն է:

Ակնկալում ենք Ռադիկ Մարտիրոսյանի փոքրագույն համարձակությունը՝ կռիվ տալ սեփական ԵՍ-ի հետ եւ հանուն Հայաստանի գիտության կազմակերպման հրաժարվել մյուս երեք աթոռներից: Եվ գոհանալ այն իրողությամբ, որ առանց այն էլ ակադեմիայի **նախագահի** (եւ ոչ թե պրեզիդենտի) աթոռը անօրինական է զբաղեցնում:

Ի դեպ, Ռադիկ Մարտիրոսյանը Երեւանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում աշխատելիս **սեփական** նախաձեռնությամբ սահմանել էր՝ համատեղության կարգով գիտական-մանկավարժները կարող են աշխատել **մինչեւ քառորդ դրույք**: Փայլուն որոշում, հանճարեղ նախաձեռնություն գիտության եւ կրթության ինտեգրման կարեւորագույն դրույթի իրականացման գործում: Ինչո՞ւ չանսալ սեփական վարչական ձայնին, ինչո՞ւ սպասել, որ այս հարցով ասուլիս կազմակերպվի, նորից վերհիշվեն նախորդ հրապարակումները, նորից...

«Զորավիգ»